

այն բանից, թե ինչպես է մեկնաբանվում հասարակության քաղաքական համակարգի էությունը, քաղաքագիտական տարբեր դպրոցների և քաղաքագետների կողմից «քաղաքական իշխանություն» երևույթը տարբեր մեկնաբանություն է ստանում:

СУЩНОСТЬ И УРОВНИ ПОЛИТИЧЕСКОЙ ВЛАСТИ

А. А. Калашян

“Политическая власть”, объединяя целую гамму многоликих, полиизмеряемых и многослойных политических и общественных отношений, характеризуется институционализированной системой, легитимностью и пр. особенностями. Будучи реализацией упомянутых “обобщенных способностей”, политическая власть выделяется предельно обширной функциональной сферой. Она функционирует везде, где действуют устойчивые и организованные общественные и политические структуры, поэтому рассматривается в антологическом, гносеологическом, функциональном и пр. уровнях.

Одновременно в зависимости от того, как интерпретируется сущность политической системы, политологические школы и политологи сущность политической власти интерпретируют по-разному.

THE ESSENCE AND THE LEVELS OF THE POLITICAL AUTHORITY

A. A. Kalashyan

The “political authority” comprises a whole color pan of multi-level and multi-form political and social relationships, due to which it also stands out with its extremely wide range of implementation sphere. Practically the political authority exists in the places wherever stable and unique structures created by people function, which is why its essence is considered from the point of view of cognition, existentialism and implementation as well as from other viewpoints. Depending on the fact how the essence of the social structure is interpreted, both different schools of politology and politicians ascribe to the phenomenon of the “political authority” various interpretations.

Մ. ԴՅՈՒՎԵՐԺԵՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. Ա. ՔԱՆՇՅԱՆ

Քաղաքական գիտությունների թեկնածու

«Քաղաքական ինստիտուտ» հասկացությունը քաղաքական գիտության, ավելի կոնկրետ՝ քաղաքական կառույցների տեսության հիմնարար հասկացություններից է: Այն բնութագրում է քաղաքական գործընթացների և քաղաքական հաղորդակցման առանցքային հիմնատարերը՝ մասնավորապես քաղաքական տարածության, քաղաքական և հասարակական երևույթների կարգավորվածությունը կամ կարգավորման գործընթացները բնութագրելու համար: Եվ քանի որ քաղաքական տարածաժամանակային որակներն աչքի են ընկնում բազմազանությամբ, հավանաբար այդ պատճառով էլ տեսության շրջանակներում «քաղա-

քական ինստիտուտ» հասկացությունը բնութագրվում է բազմիմաստությամբ: Քաղաքագետներից ոմանք (Տ. Վերլե, Մ. Օրիուն, Ժ. Ռենար) «քաղաքական ինստիտուտը» բնութագրում են որպես որևէ գաղափարի (համերաշխության) շուրջ միավորված մարդկանց խումբ, երկրորդները (Թ. Պարսոնս, Տ. Յորտոն) «քաղաքական իշխանություն» են համարում քաղաքական դերերի, վարքագծի և հարաբերությունների համակարգը, ոմանք էլ (Ռ. Քինգ)՝ քաղաքականության բնագավառում մարդկանց վարքագիծը կանոնակարգող նորմերի համակարգը¹:

Ռուսական քաղաքագիտական դպրոցի ներկայացուցիչներից ոմանք քաղաքական ինստիտուտը որակում են որպես երկդասյա երևույթ, որպես «1) կազմակերպված կառուցվածք, կենտրոնացված կառավարում և գործադիր ապարատ ունեցող քաղաքական հաստատությունների (իշխանության ինստիտուտներ՝ կառավարություն, օրենսդիր ժողով, պետական կամ քաղաքային խորհուրդ, պրեֆեկտուրա և այլն) ամբողջություն, և 2) քաղաքական գործառույթների, հարաբերությունների, կառավարման տիպեր, ձևեր և էություններ. նախագահական ինստիտուտ (նախագահական իշխանության), ներկայացուցչություններ (այսինքն՝ դրանցում ընտրողների շահերը և կամքը ներկայացնող վստահված անձերի, իշխանության ներկայացուցչական օրգանների՝ խորհրդարանի և այլն ընտրության պրոցեդուրաներ), կուսակցություն կամ կուսակցություններ, ասոցիացիաներ և այլ կազմավորումներ (որոշակի պատճառների, հատկանիշների և այլնի հիման վրա հասարակության մի մասի խմբային կազմավորումներ, ընդհուպ ընտանիքի, մարդու անձնական կյանքի ինստիտուտները և այլն)»²: Ոմանք էլ գտնում են, որ «քաղաքական ինստիտուտ» իրենից ներկայացնում է «քաղաքական գործընթացների ոլորտը կարգավորող սկզբունքների, նորմերի, ձևական և ոչ ձևական կանոնների համալիր», և դրա հիման վրա տարբերակում են «կոշտ նորմերի և կանոնների վրա հենված ավանդական ինստիտուտներ և ճկուն կանոնների ու նորմերի վրա հենված մոդեռն ինստիտուտներ»³:

Տեսակետների այդ բազմազանությունը մկատի ունենալով՝ Մ. Դյուվերթեն փաստում է, որ մինչ օրս տեսական մտքի շրջանակներում ինչպես «ինստիտուտ», այնպես էլ «քաղաքական» հասկացությունները կոնկրետ նշանակությամբ չեն կիրառվում: Նա համոզված է, որ այդ ամենը պայմանավորում է նաև «քաղաքական ինստիտուտ» հասկացությունը սահմանելու բարդությունը⁴: Եվ պետք է ընդունել, որ այս հարցում քաղաքագետի մոտեցումն ունի իր հիմնավոր պատճառները: Դրանցից առաջինն այն է, որ քաղաքական ինստիտուտների ձևավորումն աչքի է ընկնում ընդգծված պատմականությամբ: Այլ կերպ ասած՝ քաղաքական ինստիտուտները պատրաստի վիճակով հանդես չեն եկել, այ-

¹ Մանրամասները տե՛ս **Պողոսյան Վ., Միրումյան Կ., Բաբաջանյան Ա., Աստվածատուրով Ա.**, Քաղաքագիտություն: Հանրագիտական բառարան, Երևան, 2004, էջ 138:

² Политология: Энциклопедический словарь (Общ. ред. и сост. Ю. И. Аверьянов). М., 1993, с. 122: Հմմտ.՝ **Պողոսյան Վ., Միրումյան Կ., Բաբաջանյան Ա., Աստվածատուրով Ա.**, Քաղաքագիտություն: Հանրագիտական բառարան, էջ 138 և այլն:

³ Политология: Словарь-справочник (М. А. Василик, М. С. Вершинин и др.). М., 2000, с. 98.

⁴ Տե՛ս **Дюверже М.** Политические институты и конституционное право / Антология мировой политической мысли. В 5-и томах. Т. 2, М., 1997, с. 644.

սինքն՝ քաղաքական ինստիտուտների «... նախնական ձևերը կազմավորվել են հասարակության ինքնակառավարման և ինքնակարգավորման (տարերային) մակարդակում, ... իսկ երբ նրանցում ձևավորվում են կարգավորված, ուղղորդված գործողություններ, առաջնորդներ, որոնք ընդունակ են գլխավորել, կազմակերպել այդ գործողությունները, իսկ հետագայում նաև դեկավարման մշտական խմբերը՝ բուն երևույթը ենթարկվում է կառավարման»⁵: Այդ ամենից հետևում է, որ քաղաքական երևույթները և քաղաքական շարժումները ձևականացված և կարգավորված կառուցվածք և իշխանական տարբեր մակարդակի աստիճանակարգության տեսք են ստանում բացառապես **ինստիտուտացման** շնորհիվ: Եվ այդ տեսանկյունից ինստիտուտացումը հանդես է գալիս որպես «... քաղաքական կայունության կարևորագույն պայման: Այն կախված է քաղաքական կառույցների ինքնավարության աստիճանից, նրանց հարմարվողականությունից և միավորումից»⁶:

Տրամաբանական այդ ուղղվածությունը բնորոշ է նաև Մ. Դյուվերթեի հայեցակարգին, որը «քաղաքական ինստիտուտ» երևույթի համակողմանի ուսումնասիրության համար առաջնահերթ է համարում «քաղաքական» և «ինստիտուտ» հասկացությունների կոնկրետ, օբյեկտիվ և գիտական ըմբռնումների համադրական վերլուծությունը⁷: Անդրադառնալով «ինստիտուտ» հասկացության ստուգաբանությանը և բովանդակային առանձնահատկությունների վերլուծությանը՝ քաղաքագետը միմյանց է հակադրում երկու մոտեցումներ: Է. Լիտրեի տեսակետի վերլուծությամբ նա ցույց է տալիս, որ այդ հայեցակարգում «ինստիտուտ» հասկացությունը բնութագրվում է որպես այնպիսի ամբողջություն, որն իր մեջ ներառում է «այն ամենը, ինչը հայտնագործվել և հաստատվել է մարդկանց կողմից՝ ի տարբերություն այն բանի, ինչը տրված է բնության կողմից»: Այլ կերպ ասած՝ այդ մոտեցման շրջանակներում «ինստիտուտ» է համարում այն ամենը, ինչը հակադիր է բնականին կամ բնությանն ընդհանրապես: Իսկ Է. Դյուվերթեյմի սոցիոլոգիական հայեցակարգի օրինակով փաստում է, որ նրանում «ինստիտուտ» է համարվում գաղափարների, հավատալիքների, սովորույթների և հասարակական պրակտիկայի ամբողջությունը, այն ամենն, ինչն անհատականությունը ստանում է «պատրաստի տեսքով»: Վերլուծաբանը նաև պնդում է, որ սոցիոլոգիական ըմբռնման շրջանակներում քննարկվող հասկացությունը բնու-

⁵ Политология: Энциклопедический словарь, с. 122.

⁶ Տե՛ս Политология: Словарь-справочник, с. 98: Հմմտ.՝ **Պողոսյան Վ., Միրումյան Վ., Քաղաքացիական Ա., Աստվածատուրով Ա.**, Քաղաքագիտություն: Հանրագիտական բառարան, էջ 138-139:

⁷ Տե՛ս **Дюверже М.** Политические институты и конституционное право, с. 644: Համահունչ է նաև ռուսական քաղաքագետների մոտեցումը: Մասնավորապես, Վ. Իլյինը և Ա. Պանարինը պնդում են, որ քաղաքական տարածության և ժամանակի տիպաբանական առանձնահատկությունները բացատրելու համար «քաղաքական կառույց» և «քաղաքական ինստիտուտ» հասկացությունները բնութագրվում են առնվազն երկակի բնույթով՝ «1. Քաղաքական կառույցներ (քաղաքական ոլորտի տաքսոններ)՝ յուրահատուկ առարկաներ, որոնց գոյությունն ինքնապատակ է: 2. Երկրային տարածքներում անհավասարաչափ բաժանված քաղաքական գործընթացների տարրերը կրող քաղաքական կառույցներ, որոնց առանցքը սինետրիան է, ելակետային ռեակցիան՝ տարուղղվածությունը, բազմահարթությունը», **Ильин В. В., Панарин А. С.** Философия политики. М., 1994, с. 45:

թագրվում է որպես «գործունեության կամ գաղափարների **ինստիտուտացված** ամբողջություն, այլ կերպ ասած՝ ինստիտուտ է համարում այն ամենը, ինչը կարելի է որակել որպես «հասարակական ունիվերսումի բնական փաստ»⁸:

Այդ մոտեցումների վերլուծությունը ֆրանսիացի տեսաբանին բերում է այն եզրակացության, որ դրանցից առաջինում «ինստիտուտ» հասկացությունը սահմանվում է բավականին սեղմ, իսկ երկրորդում՝ չափազանց ընդարձակ: Եվ համադրության հիման վրա ընտրելով ոսկե միջինի ճանապարհը՝ նա վերլուծության համար ելակետային է համարում այն տեսակետը, թե քաղաքագիտության շրջանակներում «ինստիտուտ» հասկացությունը կարելի է կիրառել «... նշանակելու համար գաղափարների, հավատալիքների, սովորույթների կարգավորված և կազմակերպված ամբողջությունը (օրինակ՝ անունությունը, ընտանիքը, ընտրությունները, կառավարությունը, սեփականությունը և այլն)»⁹:

Անդրադառնալով «քաղաքական» հասկացության էության վերլուծությանը՝ Մ. Դյուվերթեն հավաստում է, որ այս պարագայում ևս առնչվում ենք սահմանումների և ընթացումների բազմազանությանը: Եվ դրանց համեմատականի հիման վրա տեսաբանը, «բովանդակային խմբավորում» կատարելու ճանապարհով, հանգում է այն հետևությանը, որ սահմանումների այդ բազմազանությունը կարելի է դասակարգել հիմնական երկու խմբերում. առաջինում՝ հիմք ընդունելով բառի ստուգաբանությունը՝ քաղաքական ինստիտուտ է համարում պետական ինստիտուտները, այսինքն՝ մարդկային որոշակի ընդհանրության ինստիտուտները, որոնք տվյալ պահին առավելագույնս կազմակերպված են և կատարելագործված, իսկ երկրորդ խումբը կազմում են այն տեսակետները, որոնք «քաղաքական» հասկացության էությունը նույնացնում են հասարակայնորեն հիմնարար այն երևույթի հետ, որը սեղմ կարելի է բնութագրել որպես լիազորությունների «բաժանում կառավարողների և կառավարվողների միջև»¹⁰:

Բնագրային վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ ֆրանսիացի տեսա-

⁸ Սանրամաները տե՛ս *Дюверже М.* Политические институты и конституционное право, с. 644: Հարկ է նշել, որ որոշ քաղաքագետներ «ինստիտուտ» հասկացությունը բնութագրում են իբրև այնպիսի կարգավորված գործընթաց, որի արդյունքում «որևէ քաղաքական երևույթ կամ շարժում վերածվում է որոշակի կառուցվածք, տարբեր մակարդակների իշխանության աստիճանակարգություն ունեցող կազմակերպված կառույցի, ձևականացված հարաբերությունների», Политология: Энциклопедический словарь, с. 122: Մյուսները բուն ինստիտուտացման գործընթացը որակում են որպես «քաղաքական հիմնական դերակատարների կողմից քաղաքական նորմերի, պրոցեդուրաների, քաղաքական վարքագծի արժեքների և էտալոնների, ինչպես նաև դրանց վերահսկողության միջոցների կազմավորման, ամրապնդման և ճանաչման գործընթաց», Политология: Словарь-справочник, с. 98:

⁹ *Дюверже М.* Политические институты и конституционное право, с. 644.

¹⁰ Տե՛ս *Дюверже М.* Политические институты и конституционное право, с. 644: Այս համատեքստում հիմնահարցի վերաբերյալ որակապես տարբեր մոտեցում է ցուցաբերում ռուսական քաղաքագիտական դպրոցը: Նրա ներկայացուցիչները պնդում են, որ քաղաքական կեցության, քաղաքական տարածության և ժամանակի առանձնահատկությունների հետ կապված առաջնային նշանակություն են ձեռք բերում քաղաքական ավանդական սուբյեկտները և ներկայացուցչական պարադիգման, թեև ազդեցիկ դեր են կատարում նաև քաղաքական իրականության «եռաչափ (բուրժուական, ինդուստրիալ և ներկայացուցչական) մոտեցումները», տե՛ս *Паварян А. С.* Политология. М., 1999, с. 187-188, 193-195:

բանը հիմնական հարցերում համերաշխում է վերը նշված երկրորդ մոտեցման հետ: Քաղաքագետը դա պատճառաբանում է նրանով, որ մարդկային ցանկացած խմբավորում (պետություն, ասոցիացիաներ, ինքնակառավարվող միավորներ, կրոնական եղբայրություններ, եկեղեցի, ընտանիք և այլն) յուրահատուկ ձևով ստորաբաժանվում է երկու կատեգորիաների՝ մարդկանց, որոնք ղեկավարում են, հրամաններ տալիս և մարդկանց, ովքեր գտնվում են ենթակայության մեջ, այսինքն՝ պետեր և ենթականեր, կառավարիչներ և կառավարվողներ: Այդ ստորաբաժանվածությունը որակելով որպես **հասարակության հիմնարար տարբերություն**՝ Մ. Դյուվերթեն, ընդհանրացնելով, պնդում է, որ «քաղաքական են կոչվում այն ինստիտուտները, որոնք շոշափում են կառավարողներին և նրանց իշխանությունը, ղեկավարներին և նրանց իրավասությունները»¹¹:

Հիմնահարցի համակարգային ուսումնասիրության նպատակով Մ. Դյուվերթեն անդրադառնում է նաև «քաղաքական ինստիտուտ» հասկացության ըմբռնումների պատմական դինամիկային: Գործընթացային վերլուծությունը շաղկապելով XIX դարի հասարակական-քաղաքական մտքի շրջանակներում տեղ գտած արմատական տեղաշարժերի հետ, նա փաստում է, որ այս փուլում **ձևավորվել է «քաղաքական ինստիտուտ» հասկացության պահպանողական ըմբռնումը**, որի հիմքում ընկած է եղել «ինստիտուտ» և «սահմանադրություն» հասկացությունների հակադրությունը:

Այդ եզրակացությունը հիմնավորելու նպատակով տեսաբանը վկայակոչում է ոչ վաղ անցյալի քաղաքական փորձը: Մասնավորապես՝ նա անդրադառնում է այն փաստին, որ XIX դարի «հասարակական ունիվերսումի շրջանակներում» զանգվածների կողմից առաջին անգամ նախանշվել են հասարակական և քաղաքական այն կառույցները, որոնք «վարակված էին տարբեր ավանդություններով, պատմությամբ, սովորություններով, վարքագծով» և այլն: Դրան զուգընթաց մեծ կարևորություն է վերագրվել նաև կամքի «այն ներուժին», որը հետևողականորեն ձգտել է քաղաքական իշխանությանը բանական և կազմակերպչական կայուն տեսք տալ: Քաղաքական այդ պատճառականության դիրքերից հանդես եկող պահպանողականները հռչակում էին պաշտոնական փաստաթղթերով հաստատված «բանական քաղաքական կառույցների» առաջնությունը և, հակադրվելով *statous quo*-ն ոտնահարող փոփոխություններին ու բարենորոգումներին, մատնանշում էին իրենց կողմից «բնական» որակվող ինստիտուտների առաջնությունը՝ այսպես կոչված «արհեստական» կառույցների նկատմամբ:

Ի հակադրություն այդ միտումների՝ լիբերալները ոչ միայն մերժեցին ճանաչել «պաշտոնական փաստաթղթերով հաստատված բանական քաղաքական կառույցների սուբստանցիոնալ համակարգը», այլև իրավական հարաբերությունները կատարելագործելու և ռեյացիոն հարաբերություններ հաստատելու ճանապարհով լայն գործունեություն ծավալեցին՝ «ջարդելու հին կարծրատիպերը» և կյանքի կոչելու «քաղաքական նոր ինստիտուտներ»: Այդ նպատակով նրանք պահանջում էին այնպիսի սահմանադրության հաստատում, որի միջոցով ոչ միայն հնարավոր կլիներ «իրավունքի ներդրմամբ հեղափոխություն իրականացնել», այլև նոր՝ սահմանադրական-իրավական բովանդակություն հաղոր-

¹¹ *Дюверже М.* Политические институты и конституционное право, с. 645.

դել քաղաքական բազմազանության բոլոր տարրերին: Քաղաքագետը նկատում է, որ այդ երկու հոսանքների մրցակցության արդյունքում «սահմանադրություն» և «սահմանադրական իրավունք» հասկացությունները հանդես եկան նորարարական նշանակությամբ, այն դեպքում, երբ «քաղաքական ինստիտուտ» տերմինը պահպանողական երանգ ուներ¹²:

Անդրադառնալով «քաղաքական ինստիտուտ» հասկացության **մերօրյա գիտական ըմբռնումների** վերլուծությանը՝ Մ. Դյուվերժեն հիմնահարցի էության լուսաբանումը կապում է մի այլ միտումի հետ: Փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքագետն այդ միտումը փորձում է բացահայտել «ինստիտուտների» և «սահմանադրության» հակադրության ճանապարհով: Ընդ որում, նա զգուշացնում է, որ նշված հակադրությունն ամենևին էլ չի վկայում այն մասին, թե իբր «ավանդությունը հակադրվում է փոփոխություններին, պահպանողականությունը՝ բարենորոգչությանը»: Նա պարզապես փաստում է, որ հիմնահարցի լուծման այս փուլի «էությունը նրանում է, որ շեշտադրվում է հասարակության իրական և կոնկրետ կազմակերպվածությունը, այլ ոչ թե իրավական դրույթները, որոնք փորձում ենք համակցել դրանց՝ առանց վերջինիս լրիվ իրականացման: Դա ինչ-որ առումով փաստի և իրավունքի հակամետություն է»¹³:

Այդ դիրքերից Մ. Դյուվերժեն պնդում է, որ քաղաքական կյանքում տեղ գտած աստիճանական այդ փոփոխությունները տարբեր ձևերով և մակարդակներով արտացոլվել են ժամանակակից հասարակական գիտությունների համապատասխան հայեցակարգերի մեջ: Իսկ դրանցում տեղ գտած տարբերությունները բացատրվում է նրանով, որ «այսօր մարդկային հասարակությունը և նրա ինստիտուտները դիտարկվում են որպես գիտության օբյեկտներ. վերջին հիսուն տարում տեղի է ունեցել հասարակական երևույթների դիտարկման գիտական մեթոդների բուռն զարգացում: Իհարկե, իրավական երևույթները ևս կարևոր տեղ են զբաղում հասարակական երևույթների միջավայրում, բայց ոչ միայն դրանք: Դրանից բացի, իրավունքի շրջանակներում անհրաժեշտ է տարբերել այն, ինչն արդյունավետորեն կիրառվող է հանդիսանում և այն, ինչն այդպիսին չէ»¹⁴: Քաղաքագետը միաժամանակ նաև պնդում է, որ նշված «քաղաքական կե-

¹² Տե՛ս *Дюверже М.* Политические институты и конституционное право, с. 645: Մ. Դյուվերժեն նաև փաստում է, որ այս հարցում մարքսիստական վերլուծությունը մասնակիորեն ճշմարտացի է այն կապակցությամբ, որ սահմանադրական ճանապարհով հաստատված լիբերալ խորհրդարանական կառավարումը բուրժուազիայի կողմից «օգտագործվում է «պրոլետարիատի» նկատմամբ իր իշխանությունը պաշտպանելու, ինչպես նաև տիրապետող կարգը պահպանելու համար: Վերլուծաբանը միաժամանակ հակասություն է արձանագրում այդ դրույթի և մարքսիստական այն հավաստման միջև, որ իրավունքն ու սահմանադրությունը հանդիսանում են տնտեսական բազիսի վրա կառուցված հասարակական «վերնաշենքի» տարրերը: Նա արձանագրում է նաև բավականին հետաքրքրական մի փոխատեղում: Եթե XIX դարում սահմանադրական և իրավական փոփոխությունների պահանջ էին առաջադրում ձախուժերը, ապա այսօր վերջիններիս մասին հիշատակում են գերազանցապես աջ կուսակցությունները, տե՛ս **Նույն տեղում**: Վերլուծաբանը փաստում է նաև, որ «այսօր շատ բան է փոխվել համենայնդեպս քաղաքականապես զարգացած երկրներում (մյուսներում իրավիճակն այնպիսին է, ինչպես Եվրոպայում XIX դարում)», **Նույն տեղում**:

¹³ *Дюверже М.* Политические институты и конституционное право, с. 646.

¹⁴ Նույն տեղում:

ցությունը» պատճառաբանված է նրանով, որ «օրենքը, իրավական դրույթները, Սահմանադրությունը հանդես են գալիս ոչ թե որպես իրականի արտահայտություն, այլ իրականի կարգավորման փորձ, փորձ, որը երբեք լիովին չի հաջողվում»¹⁵:

Ընդհանրացնելով այդ ամենը՝ Մ. Դյուվերժեն փորձում է սահմանել «քաղաքական ինստիտուտ» տերմինի «ճշգրիտ իմաստը»: Մերժելով այս հարցում «քաղաքական պահպանողական իներցիայի», հավասարապես նաև «քաղաքական հավասարակշռությունը խախտող բարենորոգչության» միակողմանիությունները՝ տեսաբանը համակողմանի հիմնավորմամբ պնդում է, որ «... մենք այլևս չպետք է կանգ առնենք քաղաքական ինստիտուտների իրավաբանական վերլուծության վրա, այլ պետք է այն ներառենք առավել ամբողջական և ծավալային սոցիոլոգիական վերլուծության մեջ, **քաղաքական գիտությանը** բնորոշ վերլուծության մեջ»¹⁶: Նա համոզված է նաև, որ մեթոդաբանական այդ մոտեցումն իրենով պայմանավորում է հիմնարար երկու հետևանքներ. «առաջին՝ այն բերում է ավանդական հետազոտական դաշտի ընդլայնմանը. այսուհետ կուսումնասիրվեն ոչ միայն այն քաղաքական ինստիտուտները, որոնք ռեզլամենտացվում են իրավունքով, այլև նրանք, որոնք իրավունքի կողմից ամբողջովին կամ մասամբ անտեսվում են, նրանք, որոնք գոյություն ունեն իրավունքից դուրս, օրինակ՝ քաղաքական կուսակցությունները, հասարակական կարծիքը, պրոպագանդան, մամուլը, «ճնշման խմբերը» և այլն, երկրորդ՝ նոր կողմնորոշումը պարտադրում է ավանդական հետազոտական դաշտի տեսակետների ներքին փոփոխություն. նույնիսկ քաղաքական այն ինստիտուտները, որոնք ռեզլամենտացված են իրավունքով, հաստատված են Սահմանադրությամբ կամ այն լրացնող օրենքներով, այլևս չպետք է ուսումնասիրվեն միայն իրավաբանական տեսանկյունից, այսուհետ անհրաժեշտ է փորձել սահմանել, թե ինչ չափով են նրանք գործառնում իրավունքին համապատասխան և որքանով են շրջանցում իրավունքը. հենվելով փաստերի վրա անհրաժեշտ է սահմանել դրանց իրական նշանակությունը, այլ ոչ թե սահմանափակվել տեսական այն կարևորության վերլուծությամբ, որոնք նրանց հաղորդում են իրավաբանական տեքստերը»¹⁷:

Եվ քանի որ քաղաքագետը համոզված է, որ «տվյալ պահին և տվյալ երկրում գործող քաղաքական ինստիտուտների ամբողջությունը կազմում է «քաղաքական վարչակարգը»¹⁸, քննարկվող հիմնահարցի ամբողջական և համակողմանի գնահատման միտումով անդրադառնում է նաև քաղաքական ինստիտուտների փոխազդեցությունների դերի արժևորմանը: Համամիտ լինելով, որ քաղաքական սուբյեկտների փոխազդեցությունն իրականանում է «քաղաքական պատճառականության» օրենքներով և իրավական այն կանոններով ու նորմերով, որոնք կարգավորում են «քաղաքական սուբյեկտների գործառնական փոխանակումները», նա փորձում է հարցը լուծել քաղաքական վարչակարգը բնութագրող

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում, էջ 646-647:

¹⁸ Նույն տեղում, էջ 647:

«ընդհանուր տեսության» շրջանակներում: Ընդ որում՝ վերլուծաբանը կարևորում է գիտական, այլ ոչ թե մետաֆիզիկական մոտեցումը, քանի որ համոզված է, թե մեթոդաբանական նշված մոտեցման պարագայում խոսք չի կարող լինել այն վերացական դատողությունների մասին, թե նախապես սահմանված արժեքների համակարգի համեմատությամբ քաղաքական որ վարչակարգն է հանդիսանում լավագույնը: Խոսք կարող է լինել միայն գոյություն ունեցող քաղաքական վարչակարգերի համեմատական ուսումնասիրության մասին, «...որպեսզի բացահայտվեն նրանց ընդհանրական գծերն ու տարբերությունները և այդ հիման վրա մշակվի տիպաբանություն, այնքան հեռու արհեստականությունից, որքանով որ դա ընդհանրապես հնարավոր է»¹⁹:

Քաղաքագետի վերլուծական տեսադաշտից չի վրիպել նաև այն իրողությունը, որ «հասարակական տարածությունը» կազմվում է հորիզոնական և ուղղահայաց կապերով կապված և փոխազդեցության մեջ գտնվող քաղաքական (համաշխարհային, պետական, տարածաշրջանային և այլն) սուբյեկտներից, ինչը նույնպես տեսական մտքի կողմից համապատասխան հայեցակարգային լուծումների պահանջ ունի: Հիմք ընդունելով քաղաքական, հասարակական և պատմական իրականության դիմամիկ բնույթը, ինչպես նաև վերջինս պայմանավորող «փոփոխականների» վերլուծության անհրաժեշտությունը՝ Մ. Դյուվերժեն, այդուհանդերձ, հիմնահարցի լուծումը փնտրում է ոչ թե «սինխրոն և դիախրոն սոցիումի» քաղաքագիտական վերլուծության, այլ՝ «քաղաքական մետաֆիզիկայի» ոլորտում: Եվ դա է պատճառը, որ այս պարագայում նա սահմանափակվում է միայն այն հիմնախնդիրների վերլուծությամբ, որոնք «... հարկադրում են հարց առաջադրել պահպանված իշխանությունների մասին և համեմատել նրանց, որոնք կառավարում է պետությունը և նրանց, որոնք կառավարում են հասարակական տարբեր խմբերը»²⁰:

Մեթոդաբանական այդ մոտեցումը գերիշխում է հատկապես «քաղաքական տարածության» արդիական իրավիճակը բնութագրող այնպիսի հիմնահարցերի լուծման գործում, ինչպիսիք են ազգ-պետություն և ունիտար պետություն-դաշնային պետություն փոխհարաբերությունը: Այդ ոլորտում ֆրանսիացի քաղաքագետը սահմանափակվում է միայն նրանով, որ ազգ-պետություն փոխհարաբերությունը քննարկում է միայն «հասարակական տարածության» համատեքստում, ինչը վերլուծաբանին թույլ է տալիս կառուցվածքային տեսանկյունից ունիտար քաղաքական ինստիտուտները որակել «լավագույն», իսկ այդ ինստիտուտների գործառնությունը՝ «առավել ամբողջական» տերմիններով²¹: Նա սահմանափակվում է նաև այն պնդմամբ, որ ազգային և ունիտար պետության տեսություններն այսօր կատաղի հարձակումների են ենթարկվում մշտապես իր դիրքերն ամրապնդող դաշնային տեսությունների կողմից»²²:

Այդ ամենը թույլ են տալիս փաստել, որ Մ. Դյուվերժեն «քաղաքական ինստիտուտ» հասկացությունը բնութագրում է որպես քաղաքականության բնագավա-

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում, էջ 647-648:

²¹ Տե՛ս նույն տեղում:

²² Տե՛ս նույն տեղում:

ռուն գաղափարների, հավատալիքների, սովորույթների կարգավորված և կազմակերպված ամբողջություն: Ինչ վերաբերում է քաղաքական ինստիտուտների կազմակերպվածության, գործունեության ձևերի, ինչպես նաև դրանց ուղղահայաց և հորիզոնական աստիճանակարգման վերլուծությանը, ֆրանսիացի քաղաքագետն այդ ոլորտում կարևորում է հատկապես ընդհանրական՝ համախմբման գործոնի և վերջինիս իրավական կարգավորման դերը:

М. ДЮВЕРЖЕ О ПОЛИТИЧЕСКИХ ИНСТИТУТАХ

А. А. Калашян

На основе расширения поля традиционного политологического исследования М. Дюверже характеризует политические институты как совокупность организованных коллективных идей, представлений, верований и обычаев, в рамках которой основополагающая роль отводится также конституционному праву и юридическим нормам. По мнению теоретика, совокупность политических институтов, действующих в данной стране и в данный момент, составляет политический режим, функционирование которого переплетено с “двумя большими категориями оснований политических институтов” – принуждением и юридическим регулированием.

M. DUVERGER ABOUT THE POLITICAL INSTITUTION

A. A. Kalashyan

M. Duverger defines the concept of “political institution” as the arranged and structured unity of ideas, beliefs and traditions existing in the field of politics. As for the forms of structure and activity of those political institutions, as well as the analysis of their horizontal and vertical structuring, the French politician puts the stress on the factor of general consolidation and the role of legal regulation of the latter.